

41.2
34

87

Հրատարակ. Բազումայ Հայոց Կուլտուրական Միութեան
„Հրատարակչական Մասնանիշի № 24

XVIII

Կ. Յ. Խատիսովան

**ԻՆՉ ՏԻՊԻ ՍՏՈՐԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԸՊ-
ՐՈՑՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ**

Ձեռնոց. ՌՈՒՍ. ԿԱՅՏԵՐՈՎԱՆ ԱՐԻԵՍՏԱԳԻՏ. ԸՆԿ. ԲԱԳԻԱՅ ՃԻԳՂԻ ԸՆԴ-
ՀԱՆՈՐԵ ԺՈՂՈՎ.ԻՆ 1911 ԹԻԻ ՓԵՏՐՈՐԻ 20-ԻՆ.

ԹԱՐԳՄԱՆԵՑ 3. 4.

370

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Издательской Секции № 24

К. Хатисовъ

Въ какомъ типѣ низшихъ и среднихъ учебныхъ
завед. нужд. въ настоящ. время Закавказ. край.

Переводъ О. К.

Электротпечатня газ. „БАКУ“
Баку 1911 г.

37
Խ - 34

ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ 0.

ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. „Պատանեկան Գրադարան“ №№ 1—17
Իւրաքանչիւր գիրքը — ռ. 30 4.
 2. Хрестоматія—Ս. Մանդիկեանի — „ 75 „
 3. Դիւան հայոց պատմութեան—Գիւս ա. ֆ.
Ադանեանի 4 „ — „
 4. Բանաստեղծութիւններ — Յ. Յովհաննիս-
տեանի 1 „ 50 „
 5. Վէրք Հայաստանի—Խ. Արովեանի — „ 50 „
 6. Վիլհելմ Տէլլ—Վ. Օստրոգորսկու — „ 5 „
 7. Յրինի—Վ. Օստրոգորսկու — „ 5 „
 8. Գործնական շերամապահութիւն—Կ. Մե-
լիֆ-Շահնազարեանի — „ 5 „
 9. Բամբակի մշակութիւնը — Ն. Տարակի-
նովի (Թարգմանութիւն) — „ 3 „
 10. Մանր վարկի հաստատութիւնները — „ 5 „
 11. Բուսական աշխարհ—Կ. Մելիֆ-Շահնա-
զարեանի — „ 5 „
- ԴՐՒԱԳՆԵՐ ՀԱՅ. ՊԱՏՄՈՒԹ. №№ 1—11
12. Արտաշէս Երկրորդ—Վ. Փափազեանի — „ 15 „
 13. Գագիկ Երկրորդ — „ 15 „
 14. Վարդանանց պատերազմը — նոյնի — „ 30 „
 15. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ—Մ. Առա-
ֆեյեանի — „ 15 „
 16. Մահակ և Մեծրոպ—Վ. Փափազեանի — „ 15 „
 17. Վահան Մամիկոնեան—Մ. Առաֆեյեանի — „ 15 „
 18. Թորոս իշխան Վ. Փափազեանի — „ 15 „
 19. Լեան Երկրորդ — „ 15 „

37
14-34 2430

Հրատարակ. Բազմալ Հայոց Կուլտուրական Միութեան
Հրատարակչական Մասնաճիւղի № 24

370
1943-իւ



ԻՆՁ ՏԻՊԻ ՍՏՈՐԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԸՊ-
ՐՈՑՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ
ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԸ

1003
14936

ԶեկուՅ. ՈՒՌՍ. ԿԱՅՈՒՐԱԿԱՆ ԱՐԻԵՍՏԱԳԻՏ. ԸՆԿ. ԲԱԳՐԱՅ ՃԻՂԴ ԸՆԳ-
ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ 1911 ԹԻՒ ՓԵՏՐՍԲՐԻ 20-ԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ 3. 4.



Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Издательской Секции № 24

К. Хатисовъ

Въ какомъ типѣ низшихъ и среднихъ учебныхъ
завѣд. нужд. въ настоящ. время Закавказ. край.

Переводъ О. К.
Электротпечатня газ. „БАКУ“
Баку 1911 г.

8 MAY 2013

44529

Մի որևէ երկրի անտեսական և կուլտուրական բարգաւաճումն անհնարին է, եթէ այդ երկրի մէջ չի նկատուում արդիւնաբերութեան և գիւղատնտեսութեան ճոխ զարգացում:

Իսկ գիւղատնտեսութեան զարգացումն էլ անհնարին է, եթէ միջին և ստորին կրթութեան գործն արժանավայել բարձրութեան վրայ դրած չէ:

Այսպիսով, կրթութեան գործը նպատակայարմար հիմքերի վրայ դնելը, որն արտայայտուում է որևէ երկրի համար ամենաանհրաժեշտ դպրոցական տիպն որոշելով և այն իրականացնելով կեսնքի մէջ,—համարուում է այդ երկրի կուլտուր-տնտեսական բարգաւաճման գլխաւոր գործօններից մէկը:

Եւ քանի որ Արևեստագիտական Ընկերութեան էական նպատակն է հետազօտել այն պայմաններն, որոնք իրենց գործունէութեան շրջանում առաջացնում են արդիւնաբերութեան բարգաւաճում,—ես՝ վերջին 10—12 տարիների ընթացքում՝ բազմիցս թոյլ եմ տւել ինձ ձեր ուշադրութիւնը դարձնելու Կովկասի ժողովրդի լուսաւորութեան հարցի վրայ:

Այդ հարցի առթիւ ես կը ցանկանայի մի քանի խօսք տանլ այսօր:

4702-87

Նախապէս յայտնում եմ, ես չեմ ափ ափնալիսի բան, որ ձեզ յայտնի չլինէր. աւելին կ'ասեմ՝ շատ բան, որ այսօր ինձնից կրլսէք,—իմ նախկին գեղուցումների մէջ եղել են, կամ տպւել են տեղական թերթերում, ինչպէս, օրինակ „Нефтяное Дѣло“ թերթի մէջ:

Այնուամենայնիւ, ես վստահանում եմ ձեր ուշադրութիւնը դարձնելու այս հարցի վրայ, վստահանում եմ հէնց այն պատճառով, որ եթէ այդ հարցն առաջ էլ սուր կերպարանք էր ստացել մեր մէջ, այժմ աւելի ես սուր դրութեան մէջ է:

Բանն այն է, որ հայ-թուրքական ամօթալի ընդհարումները, որոնց դեռ նորերս ականատես եղանք, և այն յուզմունքները, որոնք առաջ եկան այդ ընդհարումներից յետոյ՝ հիմնովին խախտեցին մեր երկրի բարեկեցութիւնը: Երկիրն աւերւել, երկիրն աղքատացել է...

Միայն պատշաճաւոր անսեսական միջոցներով այն կարող է ոտքի կանգնել, իսկ այդ միջոցները՝ կեանքի մէջ մտցնել կարող են միայն համապատասխան կերպով պատրաստւած մարդիկ:

Այդ մարդկանց կարող է պատրաստել միայն կանոնաւորապէս հիմնւած և կանոնաւոր կերպով գործ կատարող դպրոցը:

Եւ անս, այդ պատճառով է, որ ես իմ այսօրւայ գեղուցումը նւիրում եմ մեր հէնց ստորին և միջնակարգ դպրոցին:

* * *

Դառնանք ստորին դպրոցին և նախապէս քննութեան առնենք Անդրկովկասի գիւղերի և քաղաքների ներկայ դրութիւնը: Սկսենք գիւղից և ծանօթանանք մի քանի թւերի:

Ես ձեռքիս տակ ունեմ թւեր, որոնք վերաբերում են Անդրկովկասի միայն հայ գիւղերի տարրական կրթութեան գործին:

Ես կարծում եմ, որ մօտաւորապէս այդ թւերով կարելի է բնորոշել դպրոցական գործի դրութիւնը նաև վրաց և թուրքական գիւղերում, այդ պատճառով, յետագայում, ես առաջ եմ բերելու միայն այն թւերը¹⁾, որոնք վերաբերում են հայ գիւղերին, և որի համար նախապէս խնդրում եմ Ձեր ներողամտութիւնը:

Անդրկովկասի մէկ և կէս միլիոն հայ ազգաբնակչութիւնն ունի ընդամենը 332 եկեղեցական-ծխական դպրոց:

Այդ դպրոցներում սովորում են մօտ 22,500 աշակերտ-աշակերտուհիներ:

Անդրկովկասում կան նաև պետական (այսպէս ասուած՝ մինիստրական) դպրոցներ՝ 10,700 աշակերտներով:

Այսպիսով՝ հայոց տարրական դպրոցների աշակերտների թիւը հասնում է 40,000-ի:

Եթէ համարենք, ինչպէս ամեն տեղ ընդունւած է, որ դպրոցական հասակի երեխաներն ութ տոկոս են կազմում, այն ժամանակ, նշանակում է, մէկ և կէս միլիոն հայ ազգաբնակչութիւնը կունենայ 120,000 երեխայ դպրոցական հասակի, որի միայն $\frac{1}{3}$ մասը տարրական կրթութիւն է ստանում, իսկ $\frac{2}{3}$ մասը մնում է բոլորովին անգրագէտ²⁾:

Ինչ վերաբերում է այդ դպրոցներում աւանդւած ուսման օրակին, մենք այդ հեշտութեամբ կարող ենք բնորոշել, եթէ աչքի առաջ ունենանք, որ իւրաքանչիւր գիւղական դպրոց, որտեղ սովորում են 50—60 երեխայ,

¹⁾ Այս թւերը ես վերցրել եմ Բ. Հ. Կ. Մ. կրթական բաժանմունքի 1908—1909 տարւայ հաշւից:

²⁾ Այստեղ աչքի առաջ չունենք այն 8000 երեխաները, որոնք սովորում են միջնակարգ դպրոցներում:

ունի տարեկան ելումի հաշիւ (բիւջէ), միջին թւով հաշւած՝ 700—900 բուբի:

Աւելի լաւ կը բնորոշենք այդ կըթութեան որակը, եթէ մի հարեանցի հայեացք գցենք այն աղիւսակի վրայ, որ ես հիմա կը բերեմ և որտեղ կան տեղեկութիւններ՝ թէ ամեն մի ժողովուրդ որքան է՝ ծախսում տարրական կըթութեան համար մի հոգու վրայ:

Նոր Զելանդիայում	5	բ.	74	կ.
Միացեալ Նահանգներում	4	բ.	86	կ.
Գերմանիայում	3	բ.	43	կ.
Շւեյցարիայում	2	բ.	43	կ.
Անգլիայում	2	բ.	36	կ.
Ֆրանսիայում	1	բ.	66	կ.
Դանիայում	1	բ.	52	կ.
Իտալիայում			76	կ.
Ռուսաստանում			42	կ.

Այս աղիւսակը բացատրութիւնների կարօտ չէ:

Հասկանալի է, որ թէպէտ աղքատիկ է մեր սկզբնական կըթութիւնը, թէպէտ մատչելի է դպրոցական հասակ ունեցող երեխաների ընդհանուր քանակութեան միայն ¹/₃-ին, այնուամենայնիւ աւելի լաւ է, քան թէ այդ կըթութիւնն էլ բոլորովին չլինէր:

Սակայն, ընդհանրապէս եթէ դատենք, այս դրութիւնը թէպէտ ինքնըստինքեան ակներև է, բայց մեր երկրի նկատմամբ կարօտ է մեծ և շատ մեծ մեղմացուցիչ բացատրութեան:

Բանն այն է, որ մեր գիւղացին բացառապէս ապրում անբարեյաջող պայմանների ներքոյ: Հողի սակաւութիւնը, հողաբաժնի մեծ մասի անյարմարութիւնն երկրագործութեան համար և կլիմայի խստութիւնը, որ որոշ չափով կը ճատում է բուսաբերութեան ժամանակամիջոցը (vegetационный период), այս բոլորը մեր գիւղերի բնորոշ յատկութիւններն են: Այս պայմանների ներքոյ՝ մեր

գիւղացուն մնում է երկուսից մէկն անել, այսինքն, կամ իր հողից օգտուելու համար գործադրել բարգաւաճ մշակման եղանակներ (приемы интенсивной культуры), ներմուծելով գիւղատնտեսական արդիւնաբերութեան նոր ճիւղեր, այն է՝ մեղւաբուծութիւն, շերամապահութիւն, պտղագործութիւն, և այս կամ այն անախագործական արհեստը, որը կարող է որևէ յայտնի գիւղական շրջանում զարգանալ, և այդպիսով գիւղի մէջ իր գոյութիւնը պահպանելու միջոց և ապահովութիւն ունենալ. կամ թէ՛ սկամայից չարիք գործել. տեղափոխել քաղաք և այդպիսով խտացնել քաղաքների քաղցած պրոլետարի շարքերը:

Եթէ այս դատողութիւնը ճիշտ է, սրանից բխում է մի ուրիշ դատողութիւն, ըստ երևութին շատ արտառոց (парадокс), բայց իմ խորին համոզմունքով շատ ճիշտ: Այդ դատողութիւնը հետևեալն է. մեր արդի տարրական դպրոցներն, եթէ մի այլ ուղղութիւն կամ բնոյթ չստանան՝ կը դառնան մի անուրանալի չարիք:

Որպէսզի ապացուցանեմ իմ առարկութեան ճշտութիւնը, կարևոր իմ համարում յիշել, որ արդի գիւղական տարրական դպրոցներում աւանդում են միայն զբաղիտութեան տարերքը, թւաբանութիւն և կրօն:

Այդ դպրոցներում ոչ մի գործնական գիտութիւն չի աւանդում, ուստի գիւղական դպրոց աւարտող պատանին կեանք է մտնում, առանց որևէ արհեստ իմանալու:

Եւ ի՞նչ է լինում սրա հետևանքը:

Ահա ինչ.

Ուսման ազգեցութեան տակ երեխաների աշխարհայեացքն ընդլայնում է, պահանջները շատանում են, աւերած գիւղը և նրա անմխիթար կենցաղը իր բացասական կողմերով, իհարկէ, աւելի որոշ և հասկանալի կերպով են պատկերանում զբաղէտ աղայի առաջ, որն ա-

ւարտել է դպրոց, քան մի անգրագէտի:

Միևնոյն ժամանակ այդ երեխայի ձգտումը բարե-
լաւելու իր կեանքի պայմանները, հարկաւ, դատապարտ-
ւած է անյաջողութեան, որովհետև, համեմատաբար բա-
րեկեցիկ ապրելու ճաշակ ստացած լինելով՝ նա չէ ստա-
ցել այդ բարեկեցիկ կեանքը ձեռք բերելու հնարաւո-
րութիւնը, որը կըստանար, եթէ մի քանի արհեստներ
խմանար և այդ արհեստները գործադրէր գիւղի մէջ՝ հա-
մեմատաբար անկարօտ ապրելու համար:

Այդ պատճառով, սովորական բան է մեր մէջ, որ
գրագէտ գիւղացին, ընտրելով ամենահեշտ ճանապարհը,
թողնում է գիւղը, գնում է քաղաք և այդպիսով խտա-
ցնում է, ինչպէս արդէն ասել եմ, քաղցած պրօլետարի
շարքերը:


Ասածիցս շատ պարզ կերպով հետևում է այս միտ-
քը. եթէ մենք կամենում ենք, որ գիւղական տարրա-
կան դպրոցը կատարէ այն բարերար դերը, որ կոչւած է
կատարելու, նախ քան սանիկին դպրոցի պատերի միջից
բաց թողնելը՝ պէտք է՝ նրան անպատճառ սովորե-
ցնենք և արհեստներ: Ուրիշ կերպ ասենք, երբ երեխան՝
3—4 տարի անցկացնելով դպրոցի պատերի մէջ՝ աւար-
տում է տարրական դպրոցի ընդհանուր դասընթացը և
դառնում է 12—14 տարեկան պատանի, նա՝ անպատ-
ճառ, հէնց նոյն դպրոցում, գոնէ մի տարի արհեստներ
պիտի սովորի.— իհարկէ այն արհեստները, որոնք կարող
են գործադրել այն շրջանում, որտեղ նա ապրում է, և
այն զբաղմունքները, որոնք բարեկեցիկ գոյութեան հա-
մար մի-մի աղբիւրներ կըլինեն:

Փոքրիկ փորձնական դաշտը, պտղատու տնկարանը,
օրինակելի փեթակը, շերամաբուծարանը, շուրճականոցը
կամ տնայնագործութեան արհեստները,— անձ ի՛նչն է
կենսականօրէն անհրաժեշտ իրագործելու իւրաքանչիւր

դպրոցին կից, եթէ մենք կամենում ենք դպրոցում տես-
նել մի ուժեղ գրդիչ, որ զարկ տայ գիւղական հոծ ժո-
ղովրդի բարեկեցութեան. սակայն, ոչ թէ մեզ փողրակներ
(ТРУДОПРОВОДЬ) են հարկաւոր, որոնց միջով մեր գիւղերի
քաղցած բնակիչները մղւին դէպի բազմամարդ քա-
ղաքներ:

Կարիք չկայ աւելացնելու հէնց հիմա ասածներին,
որ իմ թւած հաստատութիւնները, այն է՝ փորձնական
դաշտը, շուրճականոցը կամ շերամաբուծարանը անմիջա-
կան օգուտ կըբերեն ոչ թէ միայն պատանիներին, որոնք
տարրական դպրոցի ընդհանուր դասընթացն են անցել,—
այլ նոյն իսկ հասակաւոր գիւղացիներին ևս, որովհետև
այդ հաստատութիւնների գոյութիւնը ուժեղ գրդիչ
լինի նրանց անտեսութիւնը բարեւաւելու համար:

* * *



Հիմա անցնենք քաղաքների ստորին կրթութեան
հարցին: Ես չեմ ցանկանում այդ հարցն ամբողջութեամբ
այստեղ քննել: Այդ հարցը շատ բարդ է և թուուցիկ կեր-
պով չի կարելի այստեղ լուծել:

Սօսելով քաղաքների ստորին կրթութեան մասին, ընդ-
հանրապէս, ես այստեղ լսի ցանկութիւնս կըյայտանէի, որ
այդ կրթութիւնը մեր մէջ լինէր այնպէս, ինչպէս օրի-
նակ Աւստրիայում, ուր դպրոցի իւրաքանչիւր տիպը բոլո-
րովին անփոփ մի հաստատութիւն է, որտեղ սանն աւար-
տելով իր ուսումը, կեանք է մտնում գոյութեան կուլի
համար բոլորովին պատրաստ:

Իւրաքանչիւր աշակերտ, որ աւարտում է Աւստրի-
այի այս կամ այն դպրոցը, հնարաւութիւն ունի
բաւականանալու այն ուսումով, որ տւել է նրան սնու-
ցանող դպրոցը, և մտնելու կեանք իբրև լիազօր քաղաքացի,

զինւած այնպիսի գիտութիւններով, որոնք լիովին յայտնի և որոշ դերք են խոստանում նրան գոյութեան համար կուռոյնների շարքում կամ եթէ ուժերն և ընդունակութիւնները թոյլ են տալիս, առաջ գնալ և մտնել ուրիշ, համեմատաբար աւելի բարձր, դպրոց:

Հիմա կանգ առնենք ներկայիս ստորին դպրոցների վրայ, որոնք գտնուում են քաղաքներում: Օրինակի համար կանգ առնենք Բագու քաղաքի վրայ: Եթէ ուշադրութիւն դարձնենք, մենք կրնկատենք այսպիսի երկոյթ. այս քաղաքում կան մի քանի տասնեակ մեքենական գործարաններ, (механические заводы), որոնցից երկուսը սարքւած են լիովին եւրոպական ձևով: Մեքենակերտ գործեր (механич. издѣлія) սպառում են Բագուի մէջ որքան ուզում էք: Միայն շոգեմեքենաներ մենք ունենք 4000 հատ՝ 10 միլիոն ընդհանուր արժողութեամբ: Այդ գումարի, եթէ ոչ աւել, մենք կունենանք էլէքտրաշարժներ (электромоторы), մղիչներ (насосы) և այլ մեքենակերտ գործեր:

Ըստ երևութիւն, այս պայմաններն աչքի առաջ ունենալով, մեր մեքենական գործարանները պէտք է ծանրաբեռնւած լինէին պատւէրներով, այնպէս որ աշխատանքի շատութեան պատճառով նոյն իսկ շունչ քաշելու ժամանակ չունենային:

Սակայն այդ միայն ըստ երևութիւն է: Իսկապէս, մեր մեքենական գործարանները՝ մինչև անգամ մեր արդիւնաբերական կեանքի ամենաեռուն ժամանակ, անգործութիւնից «անխ են քաշում» և իրար ձեռքից կոպտութեամբ փախցնում են այն էլ միայն այն պատւէրները, որ ներքին Ռուսաստանի կամ արտասահմանի համար կատարելը ձեռնտու չէ: Եւ այն ժամանակ, երբ այդ գործարանները՝ բառիս բուն մտքով՝ իրար կրծում են, ջանալով իրար բերանից խել այդ գրոշանոց աշխատանքը, — մեքենաները (машины), մղիչները, ճնշիչները (компрессоры), նաւ-

թաշարժները (нефтемоторы), էլէքտրաշարժները և ուրիշ շատ գործեր, իհարկէ, ոչ Բագույ մէջ արտադրւած, գործեր, որոնց արժէքը գնահատուում է տասնեակ և հարիւրաւոր՝ հազար ընդլիներ, — բռնում են Բագույ ապրանքանոցի ամբողջ տարածութիւնը:

Ես կրկնում եմ, ապրանքները գալիս են անվերջ, գալիս են մեզ մօտ արտասահմանից, գալիս են տասնեակ վագոններով, չնայելով Բագուում գոյութիւն ունեն եւրոպական ձևով սարքւած մեքենայ շինող գործարաններ (машиностроительные заводы) և չնայելով օտարերկրեայ մեքենակերտ գործերի վրայ դրւած համարեան արգելիչ մաքսերին: Եւ հոսում են մեր փողերը երկարաձիգ, ջրաշատ առուակներով դէպի արտասահման այնտեղի մեքենաների վճարի համար, հոսում են ամբողջ միլիոններով, մինչդեռ մեր գործարանները յուսակտուր սպասում են ձեռքերը ծալած:

Այդ ինչիցն է: Ո՞րտեղ է թաքնւած այս տգեղ երևոյթի սկզբնապատճառը: Պատճառը չափազանց պարզ է և այն է, որ մենք չունենք քչէշատ զարգացած ստորին արւեստագէտներ (низшие техники), այսինքն յիշեց գործը լաւ իմացող և լաւ հասկացող փականգործներ և ճախարակագործներ: Մեր փականգործները, և ճախարակագործները համարեան թէ ամենքն էլ անզրագէտ են կամ, յաջող դէպքում, կիսագրագէտ: Նրանք արուեստագիտական զարգացում չունեն: Ո՛չ մի ճիշտ աշխատանքի նրանք ընդունակ չեն: «Կապալով և օրահաշուով ուսող» և «ամբողջ և ոչ ամբողջ» երկաթ, — անհ նրանց առօրեայ խօսակցութեան տերմինները: Այս տերմինները լիովին համապատասխանում են նրանց կատարած գործի որակին: Պարզ է, որ այդ տեսակ արւեստագիտական պաշարով չի կարելի յաւակնութիւն ունենալ այնպիսի գործ կատարելու, որի համար պահանջուում

է շատ թէ քիչ նուրբ և ճշկրիտ գործելու՝ փորձառութիւնս. նամանաւանդ անհրաժեշտ է այդ, երբ պիտի շինուի այնպիսի բարդ մեխանիզմ, ինչպէս շոգեմեքենան (паровая машина) շոգեմղիչ (паровой насос) կամ ճնշիչ մեքենան է:

Այս ցաւն ի՞նչպէս բուժենք: Պատասխանը շատ պարզ է. մենք էլ պէտքէ ունենանք գործի համար պատրաստուած վարպետներ, ինչպէս արտասահմանումն է, որտեղ մեծ յաջողութեամբ այնպիսի մեխանիզմներ են պատրաստում, որ վերևում ասածներէս համաձայն՝ առայժմս մեր գործարանների բանը չէ:

Ի՞նչպէս առաջ բերել այդպիսի վարպետներ:

Իհարկէ զրա համար միայն մի ճանապարհ կայ. այդ ճանապարհն այն է, որ պէտք է հիմնել բանւորների համար քաղաքներում արւեստագիտական դասընթացների հետ միասին (մեր Լ՛նկերութեան դասընթացների նման, որ իրանց գործը հիմա կատարում են) նաև արհեստական ստորին դպրոցներ՝ արւեստագէտ վարպետներ պատրաստելու համար, որոնք հմտութիւն ունենային ամենանուրբ մեխանիզմներ «գուրա բերելու», այդպիսով շինելու և այնպիսի բարդ մեքենաներ, ինչպէս մղիչներն են, ճնշիչները, նաւթաշարժները և այլն:

* * *

Վերջացնելով ստորին դպրոցների հարցը, անցնենք միջնակարգ դպրոցներին:

Մեր երեխաները միջնակարգ ուսում ստանում են կամ կլասիկական գիմնազիոնում կամ բէալական դպրոցում. (ես առևտրական և արւեստագիտական դպրոցների մասին չեմ խօսում, որոնց գոյութիւնը մեզանում չի՛նչև վերջին ժամանակներս էլ հասարեան բացառիկ երևոյթ է):

Ես այստեղ իհարկէ քննութեան չեմ առնելու, թէ միջնակարգ դպրոցներն ի՞նչ թերութիւններ և առաւելութիւններ ունեն, իբրև նախապատրաստող հաստատութիւններ և իբրև անցողական աստիճաններ բորձրագոյն դպրոց մտնելու համար:

Ես պէտք է նայեմ այդ դպրոցների վրայ, իբրև ինքնատիպ դպրոցական հաստատութիւնների վրայ, որոնք կարող են ապ ուսումնաւարտ սաներ—քաղաքացիներ՝ հասարակական բրևէ դիրք զբաւելու համար:

Ներկայիս միջնակարգ դպրոց աւարտող պատանին, արդեօք, հմտութիւն ունի գոյութեան կոիւ մղելու, եթէ նա բուականանայ միայն իր ստացած միջնակարգ ուսումով և նա ին՞չ պէտք է անէ, եթէ այդ հմտութիւնը չունի:

Որպէսզի այդ հարցին պատասխանենք, աշխատենք ձեւակերպել, թէ բէալական դպրոցը իր պատերի մէջ ի՞նչ է տւել այդ պատանուն 7—8 տարւայ ընթացքում: Ես հագիւ թէ մեղանչեմ ճշմարտութեան դէմ, եթէ ասեմ, որ այդ դպրոցը տւել է, նախ՝ մի այլազան խառնուրդ տարեկան ստորից, Տրեդեակովսկուց և Կալկայի (Կայլմիուս) գիր Նեստորից, Տրեդեակովսկուց և Կալկայի (Կայլմիուս) ճակատամարտից. յետոյ, Ֆրանսերէնի քերականական կանոններից մի քանի կտոր (Ֆրանսերէն խօսել և գիտակցօրէն կարգալ, իհարկէ, չեն կարող, չնայելով եօթնամեայ դասընթացին). յետոյ, մի պատիկ կտոր բէագիտութիւն (физика) և վերջապէս, որոշ չափով՝ այն ևս շուտով մոռացող, մատեմատիկական թւաձևեր (формулы), անհրէալական դպրոցն աւարտող պատանու ամբողջ մտաւոր պաշարը:

Պարզ է, որ այդպիսի պաշարով իրական կեանքում շատ առաջ չի կարելի գնալ: Եւ յիրաւի, ի՞նչ պէտք է անէ այդպիսի կրթութիւն ունեցող մի երիտասարդ, որ արդէն քսան տարեկան է դարձել: Չէ՞ որ Բագլէ մէջ, յա-

Նոյ դէպքում, այդպիսի մի երիտասարդի կարող էն տալ գործակատարի պաշտօն ամսական 40—50 ռուբլի ուճիկով կամ ամենափոքր աստիճանաւորի տեղ մօտաւորապէս նոյն վարձատրութեամբ: Այս տեսակէտից՝ մեր երիտասարդը չի կարողանայ մրցել նոյն իսկ արւեստագիտական ստորին դպրոցն աւարտողի հետ, որն երբէք յիսուն ռուբլուց պակաս գործ չի ստանում: Պարզ է, որ այդ երիտասարդը ուզենայ-չուզենայ պիտի ձգտի բարձր կրթութիւն ստանալու, իսկ գլխաւորապէս, այդ ուսման հետ կապւած նւիրական վկայաթուղթը (ДИПЛОМЪ) ձեռք բերելու: Եւ անձ նա սկսում է ձգտել: Նշանակութիւն չունի, որ գիտութիւնը, ուսումը այդ երիտասարդներէց շատերին չի գրաւում, չի հետաքրքրում. նշանակութիւն չունի, որ շատերը նրանցից բարձրագոյն կրթութիւն ստանալու համար նիւթական միջոցներից բոլորովին զուրկ են. նշանակութիւն չունի, որ շատերը նրանցից այն չափով ընդունակութիւն չունեն, որ անհրաժեշտ է համալսարանական ուսմունքը իւրացնելու համար. նշանակութիւն չունի վերջապէս, որ ցանկալի վկայաթուղթը ստանալու համար նրանցից շատ շատերի առողջութիւնը թոյլ չի տալիս 5—6 տարի շարունակ եռանդուն ջանքեր գործ դնելու այն էլ իրանց համար բոլորովին օտար մի հիւսիսային երկրում, — նշանակութիւն չունի այս բոլորը, որովհետեւ մեր երիտասարդը պէտք է բարձրագոյն կրթութիւն ստանայ, ինչ էլ որ լինի, պէտք է, եթէ չի ուզում քաղցած մնալ և իր ընտանիքը քաղցած թողնել:

Եւ անձ մեր երիտասարդը գնում է բարձրագոյն ուսում ստանալու: Գալիս է նա մայրաքաղաք. տեսնում է, որ արհեստագիտական դպրոց մտնողների թիւը շատ է, որ իրաքանչիւր տասը ցանկացողի համար կայ միայն մի ազատ տեղ: Եւ անձ, որ աւելի վստահութիւն և աւելի հաւանականութիւն ունենայ գոնէ մի որևէ

բարձր դպրոց մտնելու՝ մեր երիտասարդը միաժամանակ քննութիւն է տալիս մի քանի այլատեսակ դպրոցներում, քննւում է և՛ լեռնային ձեմարանում, և՛ անտառային ձեմարանում, և՛ շինարարութեան դպրոցում. այդպիսով զարմանալի սէր է ցոյց տալիս և՛ դէպի լեռնային գործը, և՛ դէպի անտառային գործը, և՛ դէպի շինարարութիւնը:

Եթէ լինէր աստուածաբանութեան ձեմարան, որտեղ աւարտելով մեր երիտասարդը կարող էր հաշուել, որ լաւ ուճիկ կը ստանայ, նա անկասկած այնտեղ էլ քննութիւն կը տար: Աւելացնենք և այս, որ մեր երիտասարդը երբեմն ստիպւած է քննութիւն տալու մէկ, երկու, երեք տարի շարունակ, մինչև որ կը յաջողեցնէ մրցութեան բըննութիւնը և կը հաշուի ուսանող:

Այդպիսի մի ուսանող պէտք է սովորի ամենաքիչը հինգ տարի: Այդ հինգ տարին մեծ մասամբ եօթ տարի է դառնում, դէպքեր էլ են լինում, որ և ութ, և՛ իննը տարի:

Թէ ինչպէս են ուսանում ուսանողների մեծամասնութիւնը—ես այստեղ իհարկէ կանգ չեմ առնի այդ ուսման պատկերը նկարագրելու համար: Մեծամասնութիւնը նիւթականապէս անապահով է: Կեանքի վատ պայմանները, դասերի յետևից ընկնելու անհրաժեշտութիւնը, որևէ նպաստի, թոշակի կամ գոյութիւնը պահպանելու համար դանազան աղբիւրներ հայթայթելու անհրաժեշտութիւնը ուսանողներին, թէ բարոյապէս և թէ ֆիզիքապէս ջլատում են: Եւ այդ պատճառով, երբ երեսունին մօտ շլատում են մի ուսանող աւարտում է ուսումը և մտնում է այդպիսի մի ուսանող աւարտում է բոլորովին կատարեալ և կեանք՝ նա ուսումը համարում է բոլորովին կատարեալ և անմիջապէս կեանքի առաջ նա գնում է շատ լայն պահանջներ, համարելով այդ մի օրինաւոր հատուցում երկարատև տարիների ընթացքում կրած զրկանքների համար: Թէ ինչպիսի գիտական պաշարով է կեանք մտնում

մեր ինժեները՝ այդ մասին շատ անգամ իմ նախկին գե-
կուցումների մէջ խօսել եմ, այն գեկուցումներին, որոնք
վերաբերում էին ներկայ գեկուցմանս մէջ քննութեան
առնւած նոյնանման հարցերին. այդ պատճառով այստեղ
մատնացոյց կանեմ բոլորին և իւրաքանչիւրին յայտնի
այն անմխիթար փաստը, այն է՝ որ մեր ինժեները կեանք
մտնելով առհասարակ դադարում է ուսանելուց, թէև
հէնց այստեղ, կեանքում հարկաւոր էր լուրջ կերպով
ուսանել իսկապէս, որպէս այդ անում է նրա եղբայրա-
կից գերմանացի ինժեները: Մեր ինժեները պէտք է ու-
սանի հէնց այն պատճառով, որ բարձրագոյն դպրոցը,
որտեղ նա գեռ նոր է տարտել իր ուսումը, հնարաւո-
թիւն չէ տւել իր մասնագիտութիւնը գործնականապէս
ուսումնասիրելու. ինքնըստինքեան հասկանալի է, որ
ասածս ընդհանրապէս բոլոր ինժեներներին չի վերաբե-
րում: Իհարկէ բացառութիւններ կան, կարելի է, բարե-
բաղդաբար, և բաղմաթիւ են այդ բացառութիւնները, բայց
իմ խօսքը իհարկէ այդպիսիների համար չէ:

Ի՞նչ հետևանքների կընացնէ իրերի այդ դրութիւնը:
Իհարկէ շատ ցաւալի:

Աշխատենք պարզաբանել այդ հետևանքներից զլսա-
ւորները:

Ա. Աչքի առաջ ունենալով, որ երիտասարդ մասնա-
գէտների մեծամասնութիւնը իր ակադեմիական (համալսա-
րանական) ուսմունքը ստացել է ոչ թէ բարձրագոյն գի-
տութիւններ իւրացնելու ձգտումից զրդւած, այլ, որովհետև
բէալական դպրոցից նրանք չգիտէին՝ ո՞ւր գնան. այդպիսի
«ակամայից մասնագէտները» չեն կարող բաւարարութիւն
տալ, այն փոքրիշատէ լուրջ պահանջներին, որոնք անուում
են իրենց գործն իսկապէս իմացողներից:

Հէնց սրանից և առաջ է գալիս այն, որ մեր ին-
ժեներները մէջ շատ քչերն են նկատուում, որ իրանց



մասնագիտութեան վերաբերեալ «նոր հորիզոններ բաց անեն»:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ եթէ միայն
նրանք բախէին բարձրագոյն դպրոցների դռները, որոնց
իսկապէս գիտութիւնն էր ձգում, և ոչ թէ նրանք, որոնք
ձգտում են գլխաւորապէս նիւթական հաշիւներից զրդ-
ւած, ապա մեր մասնագէտների սուտար մեծամասնութեան
որակը բոլորովին այլ կըլինէր:

Բ. Աչքի առաջ ունենալով, որ համարեա՞ իւրաքան-
չիւր բէալական դպրոցաւարտ ստիպւած է անպատշա՞տ
բարձր դպրոց գնալ, վերջին տարիներս մեզանում նկատ-
ւում է բարձրագոյն դպրոցաւարտ մասնագէտների խիստ
մեծ յաւելումն:

Այդ իսկ պատճառով կովկասի երիտասարդները,
իրենց հայրենիքում, կովկասում, չկարողանալով բնակրւել,
որտեղ բոլոր տեղերը բռնւած են, volens nolens ստիպ-
ւած են ներքին Ռուսաստանում մնալու:

Եւ անո՞ս այսպիսի դրութիւն է առաջ գալիս, որ մի
յետ ընկած, մոռացւած Նոր-Բայազէդի պէս գաւառ իր
բնակչին մեծ դժարութեամբ, նախ, տալիս է ստորին
կըթութիւն, յետոյ միջին, յետոյ բարձրագոյն, իսկ այդ
գաւառացին Բագում և Տփլիսում բնակրւելու ջանքերից
յոյսը կտրած, բնակւում է Պետերբուրգում, Մոսկւայում
կամ ներքին Ռուսաստանի որևէ աչքի ընկնող խոշոր
կենտրոնում: Իսկ այդ բոլորովին անգրագէտ Նոր-Բայա-
զէտի գաւառը սրբան ստորին և միջին կըթութեամբ
մարդիկ կարող էր ունենալ այն փողերով, որ ծախսել
են ակադեմիական կըթութեամբ մի մասնագէտ ունենա-
լու համար, որն՝ ուսումնաւարտելուց յետոյ՝ մայրաքա-
ղաքում է տեղաւորւել և շուտով ամեն յարաբերութիւն
կտրել իրեն սնուցանող երկրից:

4702-87
1901
14936

Գ. Ներկայումս ուսաց և արտասահմանի դպրոցներում մօտ 3,000 հայ ուսանողներ են սովորում:

Հաշւելով, որ ուսանողը տարին միջին թւով կը ծախսէ մօտ 500 ռուբլի, նշանակում է, մեր երկիրը նրանց վրայ 1,500,000 ռուբլի ծախս ունի: Պետութիւնը, որ իւրաքանչիւր ուսանողի համար միջին թւով ծախսում է 300 ռ., այդ փողերը ստանում է հէնց այդ երկրից:

Եւ անս դուրս է գալիս, որ իւրաքանչիւր հայ բարձրագոյն ուսման համար ծախսում է երկու ռուբլուց քիչ պակաս, մինչդեռ ստորին կրթութեան համար նա ծախսում է, ինչպէս վերևում տեսանք, ընդամենը 32 կ.: Ի՞նչ համարժէք վարձատրութիւն կը ստանայ մեծ մասամբ գիւղացի վճարողը երկու ռուբլի ծախսի փոխարէն:

Կրկնակի համարժէք վարձատրութիւն.

Առաջինն—այն է, որ վճարելով երկու ռուբլի նա միայն երկու մեծ կենտրոնների Բագւի և Տփլիսի համար մտաւորականներ է պատրաստում, որովհետեւ եթէ հաշւենք բարձր ուսում ունեցող մարդկանց թիւը Անգլիոյ վիկարի մնացած քաղաքներում (ես իհարկէ գիւղերի մասին չեմ էլ խօսում) ընդհանուր քանակութեամբ այդ տեղ ընդամենը մի քանի տասնեակներ հաւաքւած կը լինեն, մինչդեռ Բագւում և Տփլիսում հազարներով են:

Երկրորդն—այն է, որ մեր փող վճարողը իր փողերով իր տունը քանդում է, որովհետեւ գիւղից կամ երկրորդական մի քաղաքից հեռացնելով աւելի ընդունակ, դիմացկուն և աւողջ մարդկանց, տալով նրանց բարձր ուսում, նա այդ կերպով իր գիւղը կամ քաղաքը զրկում է օգտաւէտ աշխատաւորից, որը մնալով իր տեղում անկասկած չափազանց մեծ ազդեցութիւն կ'ունենար իր երկրի ընդհանրապէս կուլտուր-տնտեսական կեանքի բարելաւման նկատմամբ:

Իսկապէս, եթէ մնար նա գիւղում կամ մի փոքր քաղաքում և ստացած չլինէր բարձր ուսում—նրանից դուրս կը գար մի բանիմաց ուսուցիչ, քահանայ կամ փոքրիկ գիւղատնտես:

Եւ ես հարցնում եմ, ի՞նչն է իսկապէս ձեռնաու, ի՞նչն է աւելի կարևոր որևէ փոքրիկ քաղաքի համար, որպիսին է Ախալքալաքը, աւելի կարևոր է, որ նրա բնակիչը լինէր առաջնակարգ ինժեներ Բագւում, թէ նա լինէր մի հասարակ ուսուցիչ իր հայրենիքում:

* * *

Այսպէս անմխիթար են իրերի անբնական դրութեան հետևանքները, որոնց շնորհիւ մեր մէջ միջնակարգ ուսում ստացող երիտասարդը անպատճառ բարձր դպրոցների դռներն է բախելու, հնարաւորութիւն չունենալով բէալական կամ կլասիկական դպրոցն աւարտելուց յետոյ իր ուժերն անմիջապէս գործադրելու:

Ի՞նչպէս պէտք է բուժել այս ցաւը:

Հարցը պարզ է. պէտք է երեխաներին այնպիսի գիտութիւններ սովորեցնել և այնպէս սովորեցնել, որ միջնակարգ դպրոցը վերջացնելուց յետոյ, նրանք ըստ ցանկութեան, կամ բարձր ուսում ստանային, կամ անմիջապէս իրենց ուժերը մի որևէ գործի մէջ դնելով—կարողանային հաստատուն, որոշ և պատւաւոր տեղ գրաւել հասարակութեան մէջ:

* * *

Եւ այսպէս, ես պարզեցի՝ այն գլխաւոր պայմաններից մէկը, որ պէտք է իրագործէ մեր միջնակարգ դպ

րոցը՝ արդէն „կեանքի համար պատրաստի“ մարդիկ տալու անհրաժեշտութիւնն է:

Տեսնենք մեր մէջ, կովկասում, բազմամարդ կենտրոնները, ինչպէս օրինակ Բագուն, և գաւառը՝ մեր երկրորդական քաղաքները և գիւղերը, ինչպիսի պատաստութեան մարդկանց կարիք ունեն:

Սկսենք Բագուից: Ամենից առաջ թոյլ եմ տալիս ինձ „Нефтяное Дѣло“ թերթում գետեղած իմ յօդածանքից մի կտոր բերել:

„Մնացնենք երրորդ կարգի ծառայողներին, որոնք հանգիստնում են մի կապակցող օղակ արդիւնաբերական նախաձեռնութեան գլխին կանգնած ինժեներների և վարպետների ու բանւորների մէջ:

Ինչպէս ասել էի, այդ կարգի արւեստագէտները սրանք են՝ ինժեներների օգնականները, մեքենական գործարանների համքարների վերահսկիչները (завѣдующіе цехами на механическихъ заводахъ), մեքենագէտները, (механики), նաւթագործութեան շրջանային վերահսկիչները (участковые завѣдующіе нефтяныхъ промысловъ), նաւթահոր փորող վարպետներ (буровые мастера) և այլն: Սրանց ուժիկների քանակութիւնը բաւական մեծ է: Օրինակի համար կբերեմ այստեղ պաշտօնեաների թիւը և ուժիկների քանակութիւնը այդ կարգի մարդկանց, որոնք ծառայում են Բագում ինձ ծանօթ մի յայտնի առևարական տան (фирма) մէջ:

Մեքենագէտ (механикъ)	250 ռ.
Կաթսայագործ (котельный мастеръ)	150 ռ.
Չուլիչ վարպետ (литейный мастеръ)	150 ռ.
Մեքենագէտի օգնական	125 ռ.
Դարբնոց վարպետ (кузнечный мастеръ)	150 ռ.
Վերահսկիչ տնտեսական մասի (завѣдующій хозяйственной частью)	125 ռ.

7 նաւթահոր փորող վարպետներ—պեղիչներ (буровой мастеръ) 100—175 ռ.
Ընդամենը 13 մարդ ամսական 100—250 ռ. ուժիկով:

Այս կարգի ծառայողների իւրաքանչիւր անհատի միջին ուժիկը կամ քանակը, նշանակում է, հաւասար է 150 ռ., սա մի աստիճանաւորի ուժիկ է, մի քանի տարի ծառայած և յամենայն դէպս ինքն էլ բարձրագոյն կըրթութեան տէր:

Մինչդեռ, հէնց հիմա յիշած այդ կարգի անհատների մեծամասնութիւնը ոչ թէ չեն ստացել բարձր և միջնակարգ ուսում, մինչև անգամ այն կրթական ցենզը չունեն, որ սնորհին արհեստագիտական դպրոցները տալիս են: Սրանք անգրագէտ են կամ յաջող գէպքում նրանցից մի քանիսը կիսագրագէտ և անւանում են, այսպէս ասած «գործնականներ» (практикъ), որոնք դուրս են եկել սովորական փակնագործների, կաթսայագործների և նաւթահոր փորող բանւորների միջից:

Ես հազիւ թէ սխալեմ, եթէ պնդելու լինեմ, որ միայն Բագում և նրա շրջակայքում իրանց համար պարպմունք են գտնում հարիւրներով այդպիսի «գործնականներ» (պրակտիկներ), որոնք բոլորը միասին ստանում են տարին 2—3 միլիոն ուժիկ: Թէ այդ «գործնականների» աշխատանքը՝ իբրև մեքենագէտների կամ նաւթահոր փորող վարպետների, ինչ չափով արդիւնաւէտ է, այդ ինքնըստինքեան պարզ է:

Ուրեմն կարո՞ղ է ուսաց արդիւնաբերութիւնը և մասնաւորապէս մեր կովկասինը այսպիսի պայմաններով մրցել ասենք գերմանական արդիւնաբերութեան հետ, մրցող էլէքտրական Ընդհանուր Ընկերութեան մէջ իւրաքանչիւր եօթ բանւորին դալիս է մի ինժեներ,—եզրակացնելը դժւար չէ:

Այնուամենայնիւ իւրաքանչիւր քչէ շատ հասկացողութիւն ունեցող գործնականին (պրակտիկին) վերցնում են ծառայութեան, վերցնում են մեր մէջ խլխլելով, և երբ այդպիսի անգրագէտ գործնականների մեծ ու անվերջ պահանջ կայ, մեր ինժեներներից շատերը նստած են առանց գործի: Ըստ երևութին այս դժուար բացատրելի երևոյթը—շատ և շատ հեշտութեամբ կարելի է բացատրել:

Բանն այն է, որ գործնականների ներկայումս վարած պաշտօնների համար մեր ինժեներները նախ՝ որ շատ թանկուտ են, նրանք՝ ուրիշ իսկ իրենց պաշտօնավարութեան սկզբին, մինչև հիմա էլ, փոքր ուճիկներով սրտանց չեն ծառայում, երկրորդ՝ շնորհիւ այն ուսման, որ նրանք ստացել են, չափազանց քիչ են պէտք գալիս, իբրև մեքենագէտներ կամ նաւթահոր փորող վարպետներ, այդ պատճառով գործնականների (պրակտիկների) աշխատանքի արդիւնաւորութիւնը, որպէս մեքենագէտների և նաւթահոր փորողների, ինչ խօսք որ առաւել է, քան ինժեներներինը, որ դեռ նոր են թողել աշակերտական նստարանը:

Եւ հէնց այդ պատճառով առաջ է գալիս այսպիսի դրութիւն. մեր ինժեներները մեքենագէտի կամ նաւթահոր փորողի պաշտօնով չեն գնում, ասենք նրանց չեն էլ հրաւիրում այդ պաշտօնների համար, իսկ «պրակտիկ»ները ուսման ցենդ չունենալով՝ իրանց վրայ դրած գործերը կատարում են չափազանց անբաւարար: Ուրեմն կարելի է հետեցնել, որ մեր արդիւնաբերութիւնը ոչ թէ աւելի ինժեներների պահանջ ունի, որոնք շարքեր են կազմում, այլ «միջին արւեստագէտների», որոնք գործի գլուխն անցած ինժեներների օգնականները պիտի լինեն և արդիւնաբերական գործի առանձին բաժինների ղեկավարողները:

Ահա այսպիսի միջին արւեստագէտներ պէտք է գըլ-

խաւորապէս պատրաստէ մեր միջնակարգ ընկերական դպրոցը, եթէ մենք ցանկանում ենք իննայել թէ ժողովրդի փողերը իզուր վասնելուց և թէ միջնակարգ դըպրոցի այն սաների ուժը և առողջութիւնը, որոնք՝ շնորհիւ զանազան պայմանների հնարաւորութիւն չունենալով բարձր ուսում ստանալու, կըկարողանան միւսնոյն ժամանակ իրանց չխեղելով հանդերձ՝ հաստատուն և պատուաւոր տեղ գրաւել հասարակութեան մէջ միջնակարգ դըպրոցից դուրս գալուն պէս:

Այսպիսի մի միջնակարգ դպրոց աւարտելով սանը բարձր դպրոց ընկնելու հնարաւորութիւնից զրկւած չի լինի բոլորովին: Բարձր դպրոցի դռները լայն բացւած կըլինեն միջնակարգ դպրոցաւարանների առաջ, բայց այդ դռներից ներս կըմտնեն ոչ թէ գլխովին բոլորը, այլ միայն նրանք, որոնք իրանց ուժերի և ընդունակութիւնների համեմատ լիովին արժանի են բարձրագոյն ուսման: Եւ այն ժամանակ կըտեսնենք, որ երիտասարդների ստւար մեծամասնութիւնը՝ աւարտելով միջնակարգ դըպրոց՝ կըբաւականանայ այդ դպրոցում ստացած գիտութիւններով:

Իսկ այդ երիտասարդները մտնելով կեանք, շնորհիւ ստացած ուսման ընոյթին, սկզբից և եթ իրանց գործին կըհամապատասխանեն իրանց կոչումով, ուստի կըկարողանան հասարակութեան համար աւելի օգտակար լինել, քան նրանք, որոնք մտել են բարձրագոյն դպրոց աւամայից, մտել են որովհետև միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ քաղցածութեան հեռանկարը նրանց վախեցրել է:

Ինչ վերաբերում է միջնակարգ դպրոցաւարանների համեմատաբար փոքրամասնութեանը, որի մէջ կայ «աստուածային կայծ», այս փոքրամասնութիւնը իհարկէ պէտք է իր ուսումը շարունակէ և բարձր դպրոց մտնի:

Մեր գիւղերի բարեկեցութեան մեծ հարւած՝ տուողը սակաւահողութիւնն է, բայց առաւել մեծ հարւածը գիւղական հողերի կանոնաւորապէս կառավարել չիմանալն է: Եւ իսկապէս, լեռնային բարձր սարահարթներում, ուր մինչև անգամ վարին դժւարութեամբ է հասնում, մի-մի ալպեան ձոխ արօտներ են. այնտեղ կանոնաւոր կաթնաստնատեսութիւն և մեղաբուծութիւն զարգացնելու ամեն յարմարութիւն կայ:

Արարատի հովիտը, որտեղ բուսնում է աշխարհիս ամենալաւ խաղողը և աշխարհիս ամենալաւ դեղձը, կարող է տալ շատ երևելի զինի, կոնեակ և պտուղների պահածոներ (консервы) (ամիճներ):

Մուղանի, Միլի, Սարգարաբաղի անջրղի դաշտերի ընդարձակ տարածութիւնները, դաշտավայրեր ամենաբերրի հեղեղահողի (пѣсь) հաստ շերտերով, դաշտավայրեր, որոնց գուրգուրում են արեգակի կենդանարար ճառագայթները...

Ուռզեցէք այդ դաշտերը և ուսական շուկան կը հարստանայ թանկագին բամբակի միլիոնաւոր փութերով...

Ժայռոտ Զանգեզուրը, Զանգեզուրը, որ հիմա իր բոլոր բնակիչներին քշում է դէպի դուրս արհեստի համար, միևնոյն ժամանակ իր կրճքի մէջ ներփակում է աշխարհիս ամենահարուստ, միլիարդներ արժեցող պղնձահանքերը:

Մենք ունենք այս ամենը, բայց մենք չենք կարող օգտուել այս ամենից, որովհետև օգտուել անկարող ենք:

Իսկապէս, եթէ ցանկանաք մի քանի հարիւր ըուրլի ծախսել պանրագործարան հիմնելու համար—գիւղատընտես չունէք. բարձր դպրոցից դուրս են գալիս **թանկանոց մարդիկ, դուք չէք կարող օգտուել նրանցից, իսկ միջին կամ ստորին գիւղատնտեսական դպրոցներ հիմա դեռ չունենք:**

Եթէ ցանկանում էք պահածոների, կոնեակի գործարաններ բաց անել կամ կանոնաւոր զինեգործութեան հիմք դնել—չէք կարող հմուտ մարդիկ չկան, որ այդ գործը կազմակերպեն, դուք կամ պէտք է այդ գործը թողնէք կամ դարձեալ դիմէք „վարեագ“ներին կամ ձեռագործ (самоделъщина) պատրաստէք, ինչպէս Երևանի դեղձի պահածոներն (կոնսերվներ) են պատրաստում, որոնք Մոսկւայում ծախում են փութը 6 ըուբ. մինչդեռ Մարսելի պահածոները աւելի վատ տեսակի դեղձերից պատրաստած, քան Երևանինը, այնտեղ ծախւում է 14 ըուրլի փութը:

Ցանկանում էք 50—60 դեսեսափն հող ուռզել, դրա համար պէտք է 2 արշին բարձրութեան վրայ շուր հանել մօտակայ գետակից. ձեզ հարկաւոր է ամենափոքր մի արևեստազէտ,—որոնում էք՝ չկայ. թանկանոց ինժեների չէք դիմի. որովհետև դրամական միջոց չունէք, և ձեր դաշտը մնում է առանց ջրելու:

Եթէ ցանկանում էք սկզբնական հետախուզութիւն կատարել Զանգեզուրում, դուք փնտրում էք փորձած հանքավար (птейгеръ)—չկայ. դիմում էք լեռնային ինժեների, նա հազարներ է պահանջում, դուք չէք կարող տալ և ձեր հանքը հողի գրկում պառկած պիտի մնայ, սպասելով պատեհ ժամանակի, և այլն, և այլն:

Եւ հէնց այս ժամանակ մեր դպրոցականները Շուշում, Ախալցխայում կամ Աղէքսանդրապօլում եռանդուն կերպով անգիր են անում „accusatif“-ները (հայցական-ները), „ablatif“-ները (գործիականները) և „aorist“-ները (վաղակատարները), կարծես թէ այդ „accusatif“-ները և „ablatif“-ները պէտք է ազատեն իրանց շէնը և գիւղը **բնաջինջ լինելուց և աղքատութիւնից:**

Ցաւին ի՞նչ դարման անել: Մի պատասխան կայ միայն. ստորին և միջին արևեստագիտական դպրոց հիմնելով, որը

տար ազգաբնակչութեանը գիւղատնտեսներ, հանքավարներ, միջին արւեստագէտներ, գինեգործներ, և բոլորովին վերացնել անխորհուրդ ընտանեկան դպրոցները:

Եւ ոչ մի կասկած չկայ, որ մի այսպիսի միջնակարգ դպրոց՝ այլ պայմաններէ կատարման հետ միասին, օրինակ՝ ճանապարհների հաղորդակցութեան բարեկարգութեան, մանր վարկէ հաստատման և այլն—անտեսական մեծ յեղաշրջում առաջ կը բերէ մեր երկրում և չգցելով Բագու, Տիփլիս և մինչև անգամ ներքին Ռուսաստանները իր բանւոր զաւակներին, իզէմս նրանց ձեռք կը բերէ այսպիսի գործիչներ, որոնց ձեռքերին վիճակած կը լինի այդ յեղաշրջումն առաջ բերելու:

* * *

Այսպէս, ես աշխատեցի պարզել՝ թէ ի՞նչ տիպի ստորին և միջին դպրոցների կարիք ունի մեր երկիրը:

Իհարկէ, ես շատ հեռու եմ այն մտքից, որ այս գեղուցումով իմ քննած հարցը, գոնէ քիչ թէ շատ լիովին լուսաբանած համարեմ: Միևնոյն ժամանակ զգում եմ՝ որ ես իմ լսողների առաջ մեղաւոր եմ. ես իմ գեղուցումով չափազանց լարեցի նրանց ուշադրութիւնը և իշարն գործ դրի նրանց ժամանակը: Բայց ինդիրն այն է, որ այս գեղուցման նիւթը չափազանց հրատապ է, չափազանց կենսական:

Եւ այդ հարցի, որ կոչ է անում ամենին և իւրաքանչիւրին այն ցաւի առաջն առնելու, որի մասին այսօր ես առարկեցի, ասում եմ, այդ հարցի հրատապ լինելով թերևս ես արգարանամ:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՑՈՒՑԱԿ*

ԲՆԱԳՐԻ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԽՕՍԲԵՐԻ ԵՒ

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

Аблативъ	Գործիական (հոլով).
Академія	Ակադեմիա, ճեմարան. ուսումնական հիմնարկութիւն.
Аккузативъ	Հայցական (հոլով).
Аористъ	Վաղակատար անցեալ (բայի ձև).
Аудиторія	Հսարան (դասախօսութիւնների սենեակ), լսողներ.
Буровая (скважина)	Նաւթահոր.
Бюджетъ	Ելևմտի հաշիւ. բիւջէ.
Буровой мастеръ	Նաւթահոր փորող վարպետ, պեղիչ վարպետ.
Вегетація	Բուսաբերութիւն. բուսածեղութիւն.
Вегетаціонный періодъ	Բուսաբերութեան շրջան, ժամանակամիջոց.
Водопроводъ	Ջրանցք, ջրմուղ.
Гимназія	Կրթարան, մարզարան.
Горный институтъ	Լեռնային ճեմարան.
Горный инженеръ	Լեռնային ճարտարագէտ (ինժեներ).
Дипломъ	Վկայաթուղթ, վկայագիր (բարձրագոյն դպրոցի)

*) Այս բառացուցակը մի փոքրիկ փորձ է տերմինները և առհասարակ մասնագիտական խօսքերը հայացնելու և հանրացնելու ժողովրդական և գրական լեզուի միջոցով:



Завѣдующій хозяйствен- ной частью	Վերահսկիչ տնտեսական մա- սի.
Завѣдующій цехами ме- ханическихъ заводовъ	Մեքենական գործարանների համբարների վերահսկիչ.
Интеллигенція	Մասնորականութիւն, մտքով զարգացած մարդիկ.
Интенсивная культура	Բարգաւած մշակութիւն (հո- ղի), ուժեղ, բեղուն մշա- կութիւն.
Каналь	Զրուղի, շրէջք, շրահարձ.
Канализация	Զրուղիներ, շրէջքներ անց- կացները, շինելը.
Компрессоръ	Ճնշիչ (մեքենայ).
Компенсация	Տրիտուր, փոխադարձ հա- տուցում.
Консервы	ա. Ամրճներ պահածքներ (մսեղէնի, բուսեղէնի, մրր- գեղէնի և այլ ուտելիղէն- ների). բ. Պահիչ ակնոցներ.
Коррективъ	Մեղմացուցիչ, մեղմացուցիչ միջոց, — խօսք.
Котельный мастеръ	Կաթսայագործ վարպետ.
Кустарные промысла	Տնայնագործական արհեստ- ներ.
Лѣсь	Հեղեղահող. յաւելած գետնի (հեղեղներից յետոյ շրի թո- ղած տղմի և աւազի շեր- տերը).
Литейный мастеръ	Զուլիչ վարպետ.
Луэсь	Լուէս, վեներախտ (սիֆիլիս).
Лѣсной институтъ	Անտառային ճեմարան.
Машина	Մեքենայ.

Математическая формула	Թւածև.
Мелорація	Հողաբարևքումն (հողը չորա- ցնել, ոռոգել, միջոցներ գործ դնել բարելաւելու).
Механикъ	Մեքենագէտ.
Механические заводы	Մեքենական գործարաններ.
Механические издѣлія	Մեքենակերտ գործեր.
Молочное хозяйство	Կաթնատնտեսութիւն.
Моторъ	Շարժիչ.
Насосъ	Զրհան. օդահան.
„ магнетательный	Մղիչ շրհան
„ всасывающий	Ծծող շրհան.
„ паровой	Շոգեշարժ, շոգեշրհան
Нефтепромышленность	Նաւթագործութիւն, նաւթ- արդիւնաբերութիւն.
Нефтемоторъ	Նաւթաշարժ.
Низшіе техники	Ստորին արւեստագէտներ.
Образцовый улей	Օրինակելի փեթակ.
Опытное поле	Փորձնական դաշտ.
Оперировать	Գործել, գործ տեսնել.
Парадоксъ	Արատուոց, տարօրինակ, նոր- օրինակ բան.
Паровой компрессоръ	Շոգեճնշիչ.
Паровая машина	Շոգեմեքենայ.
Плодовый питомникъ	Պտղատու տնկարան.
Практикъ	Գործնական.
Пролетарій	Պրոլետար, օրհացկան.
Профессиональное знаніе	Արհեստի կամ օրհէ գործի հմտութիւն, արհեստագի- տութիւն.
Пчеловодство	Մեղաբուծութիւն.
Районъ	Շրջան (տեղի).

Самодѣльщина *Ձեռագործ (Շիրակ), ձեռքագործ (Ղարաբաղ), ինքնագործ.*

Слесарь *Փականագործ.*

Стружка (стружение) *Ռանդ, ունդելը (յղկել ունդով փայտ կամ երկաթ).*

Строительный институтъ *Շինարարական ձեռարան.*

Сыроварня *Պանրագործարան.*

Туберкулезъ *Պալարախա.*

Туберкулезъ легкихъ *Թոքախա.*

Техникъ *Արևեստագէտ.*

Техническое общество *Արևեստագիտական ընկերութիւն*

Тема *Բնարան, նիւթ, խնդիր.*

Ткацкая мастерская *Ջուլհականոց.*

Токарь *Ճախարակագործ.*

Трамвай *Տրամուղի (քաղաքի երկաթուղիներ՝ ձիաքարշ, էլեքտրաքարշ, շոգեքարշ).*

Трахома *Տրախոմա, կոպախա (կոպերի հիւանդութիւն), խշրուկ.*

Трубопроводъ *Փողրակներ.*

Участковый завѣдующій нефтяными промыслами *Նաւթագործութեան շրջանային վերահսկիչ.*

Факторъ *Գործօն.*

Формула *Չև, տարազ.*

Функция *Գործառնութեան շրջան.*

Функционировать *Գործել, գործ տեսնել, գործ անել.*

Ценъ образовательный *Կրթական արածնութիւն*

Шелководство *Շերամաբուծութիւն.*

Штейгеръ *Հանքավար, հանքավարպետ.*

Электромоторъ *Ելեկտրաշարժ.*

Эквивалентъ *Համարժէք.*

20. Մամիկոնեան իշխաններ Մուշեղ և Մանուէլ — Մ. ֆ. Ղազարեանի — ր. 30 կ.

21. Միքայէլ Նալբանդեանի անտեսական թէօորիան—Եր. Պալեանի : — „ 25 „

22. Անասնապահութիւն—Ի. Բ. Լիբրոնուրովի (Թարգման.) Մասն I—Ընտ. կենդան. ինամքը և հիւանդութ. պաշտ. միջոցն . — „ 30 „

23. Անասնապահութիւն—Նոյնի. Մասն II և III—Ընտանի կենդանիների վարակիչ և ոչ-վարակիչ հիւանդութիւնների մասին — „ 50 „

24. Ի՞նչ տիպի ստորին և միջնակարգ զարոյցների կարիք ունի ներկայումս Անդրկովկասը — Կ. Յ. Խասիսեանի — „ 15 „

25. ГОЛОДЪ—Ս. Ջալալեանի — „ 30 „

26. Կանոնագիր շտեմարան. զանձարանի—Ս. Ջալալեանի — „ 2 „

27. Վարկատու ընկերութեան կանոնադրութիւն (փոխադրութիւն) — „ 30 „

28. Հոցահատիկների մարգային կուլտուրան — Գ. Ղարաբեգեանի — „ 5 „

29. Ի՞նչ բան է գէմատիօն—Ի. Բեռլոսոնու (Թարգմանութիւն) — „ 5 „

30. Ինձ մի խնդիր—րօմանս. խօսք Յ. Թումանեանի, ներգաշնակութիւն Ա. Մայիշեանի — „ 40 „

31. Ոգի Հայաստանի—գրունտախոյ նկար . . . — „ 50 „

32. Արտաշէսի յուզարկաւորութիւնը—գունատիպ նկար — „ 25 „

Պահեստը գտնուում է Միուրեան գրասենեակում:
Հասցեն՝ Баку, Армянскій Культурный Союзъ.



44.524

Էլեմենտարական սպարան «Բագու».

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.